ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 մայիսի 2013թ. թիվ 78-Ա

Ռ.ՊԱՐԱՆՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին կետի և 130-րդ հոդվածի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Ռուբեն Պարանյանին 2013թ. մայիսի 13-ից ազատել «ՀՀ Լոռու մարզի Նեղոցի Արթուր Բեգջանյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2008 թվականի մայիսի 12-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «ՀՀ Լոռու մարզի Նեղոցի Արթուր Բեգջանյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ռուբեն Պարանյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. մայիսի 8
ք.Վանաձոր